Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1244-26.09.2011-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության **1985** թվականի դեկտեմբերի **6**-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) **15**-րդ հոդվածի **1**-ին մասի **2**-րդ և **3**-րդ նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.*

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության, որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնների, մաքսային կանոնների խախտման և մաքսանենգության համար այդ անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով: Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնների, մաքսային կանոնների խախտման և մաքսանենգության համար նշված անձանց նկատմամբ տուգանք չի կարող կիրառվել, իսկ Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության խախտման համար նշված անձանց նկատմամբ տուգանք չի կարող կիրառվել, եթե իրավախախտումը կատարվել է զինված ուժերին պատկանող տրանսպորտային միջոցներով:»:

***Հոդված 2.** Օրենսգրքի **32**-րդ հոդվածի **3**-րդ մասում «այն անձը, ում անվամբ հաշվառված է տրանսպորտային միջոցը» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցի սեփականատերը» բառերով:*

Հոդված 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ և 124-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 123. Տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտումը**

1. Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների կամ պայմանների առկայությամբ տրանսպորտային միջոցները վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

2. Առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

3. Ծանրաքաշ բեռներ փոխադրելու համար օգտագործվող կամ Ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված եզրաչափերը գերազանցող կամ երկու և ավելի կցորդների հետ միասին ավտոգնացքի կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները վարորդների կողմից խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով:

4. Ապակիների լուսաթափանցելիության չափի խախտմամբ կամ կարգի խախտմամբ վարագուրապատված տրանսպորտային միջոցները վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

5. Ապակիների, արտաքին թաղանթապատում ունեցող ապակիների լուսաթափանցելիության թույլատրելի չափերը, ինչպես նաև սույն հոդվածի չորրորդ մասի պահանջից բացառությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 123.1. Տրանսպորտային միջոցների վրա լուսային և ձայնային, ներառյալ՝ հատուկ սարքավորումներ տեղադրելու կանոնները խախտելը

1. Տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող լուսային կամ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ տեղադրելը (բացառությամբ հակաառևանգման ազդանշանային համակարգի և հավաքների կամ հանրային միջոցառումների դեպքում՝ բարձրախոսների) կամ շարժման ընթացքում դրանք օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով՝ ստանդարտներին չհամապատասխանող լուսային և ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների բռնագրավմամբ:

2. Առանց համապատասխան թույլտվության տրանսպորտային միջոցների վրա կարմիր և (կամ) կապույտ գույնի լուսային ազդանշանով առկայծող փարոսիկներ կամ հատուկ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումներ տեղադրելը, ինչպես նաև օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների համար նախատեսված գունագծապատկերներն օգտագործելը (նմանեցնելը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ առկայծող փարոսիկները և հատուկ ձայնային ազդանշաններ արձակելու սարքավորումների բռնագրավմամբ:

Հոդված 123.3. Տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցները վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը

1. Օրենքով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցների անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած վիճակում կամ առանց սաղավարտի տրանսպորտային միջոցները վարելը, ինչպես նաև անվտանգության գոտիները չամրակապած կամ սաղավարտը չկոճկած կամ առանց սաղավարտի ուղևոր փոխադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Հոդված 123.4. Սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված), տեխնիկական զննություն չանցած տրանսպորտային միջոց վարելը, տրանսպորտային միջոցի նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը, տեխնիկական զննության կամ հաշվառման կտրոնը սահմանված տեղում չփակցնելը

1. Սահմանված կարգով չհաշվառված (չվերահաշվառված) տրանսպորտային միջոց վարելը, ինչպես նաև տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում դրա նկատմամբ այլ երկրում ծագած սեփականության իրավունքը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Առանց ուժի մեջ գտնվող տեխնիկական զննության կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում փակցնելու տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

3. Առանց ուժի մեջ գտնվող հաշվառման կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում փակցնելու տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Հոդված 123.5. Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշի օգտագործման կանոնները խախտելը

1. Անընթեռնելի կամ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցները վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը սահմանված տեղում չփակցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

3. Ժամանակավոր համարանիշի օգտագործման ժամկետը լրանալուց հետո տրանսպորտային միջոցը այդ համարանիշերով վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

4. Առանց հաշվառման համարանիշի, կեղծված կամ փոխարինված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցները վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

5. Տրանսպորտային միջոցը տնօրինողի կողմից հաշվառման համարանիշն այլ անձի հանձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

6. Բեռնատար ավտոմոբիլների, ավտոբուսների կամ կցորդների (բացառությամբ թեթև մարդատար ավտոմոբիլների և մոտոցիկլների կցորդների) հետնապատին հաշվառման համարանիշի թվերի և տառերի կրկնօրինակում չունեցող տրանսպորտային միջոցները վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

7. Դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշները ուղևորափոխադրումների իրականացման երթուղին սպասարկելու ժամկետի ավարտից կամ Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայից զրկվելուց կամ լիցենզիայի ներդիրի ժամկետի ավարտից հետո չվերադարձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կազմակերպության պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

8. Հայաստանի Հանրապետության տարածքում կանոնավոր ուղևորափոխադրումներ (բացառությամբ՝ միջպետականի) իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սպասարկվող երթուղում սպիտակ հիմնագույնի հաշվառման համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:

9. Հայաստանի Հանրապետության տարածքում սպիտակ հիմնագույնի հաշվառման համարանիշ ունեցող թեթև մարդատար ավտոմոբիլներով տաքսամոտորային ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

10. Դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշը այլ տրանսպորտային միջոցի վրա տեղադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

11. Անընթեռնելի հաշվառման համարանիշ է հանդիսանում այն համարանիշը, որի թեկուզ մեկ նիշը ցերեկը, պարզ եղանակին գունաթափման կամ այլ պատճառներով անշարժ տրանսպորտային միջոցի վրա տեղադրված վիճակում տեսանելի չէ 40 մետր հեռավորությունից:

12. Տրանսպորտային միջոցի համարանիշը համարվում է սահմանված տեղում չփակցված, եթե համարանիշը ընթեռնելի է ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած վիճակում, սակայն համարանիշը (զույգ համարանիշերի դեպքում՝ թեկուզ և մեկ հատը) ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում:

13. Տրանսպորտային միջոցը համարվում է առանց համարանիշի, եթե այդ համարանիշը (զույգ համարանիշերի դեպքում՝ թեկուզ և մեկ հատը) ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում և ընթեռնելի չէ ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած ժամանակ:

Հոդված 124. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

2. Տրանսպորտային միջոցների երթևեկության հակադիր հոսքերն իրարից բաժանող, ինչպես նաև լուսացույցի (կարգավորողի) արգելող ազդանշանի կամ առանց կանգառ կատարելու երթևեկությունն արգելող ճանապարհային նշանի առկայության դեպքում վարորդի կանգ առնելու տեղը ցույց տվող գծանշումների կամ նշանների պահանջները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

3. Երթևեկության առավելություն ունեցող մասնակցին ճանապարհը չզիջելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

4. Կարմիր և (կամ) կապույտ գույնի լուսային ազդանշանով առկայծող փարոսիկներ միացրած և միաժամանակ հատուկ ձայնային ազդանշաններ արձակող տրանսպորտային միջոցին ճանապարհը չզիջելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

5. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից խաչմերուկների անցման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

6. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հետիոտնային անցումների հատման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

7. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետերի անցման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

8. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից վազանցի կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

9. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երթևեկությունն սկսելու կամ մանևր կատարելու, ինչպես նաև հետընթաց վարման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

10. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից մարդկանց փոխադրման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

11. Տրանսպորտային միջոցների վարորդների (բացառությամբ ծառայողական առաջադրանքներ կատարող, օպերատիվ ծառայությունների տրանսպորտային միջոցների վարորդների) կողմից թեկուզ մեկ ձեռքի օգտագործմամբ ընթացքի ժամանակ ռադիոկապից և (կամ) հեռախոսակապից օգտվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

12. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից արտաքին լուսային սարքերից օգտվելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

13. Ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցի հեռահար լույսը մոտակայի չփոխարկելը կամ արգելված դեպքերում հեռահար լույսերով տրանսպորտային միջոցը վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

14. Տրանսպորտային միջոցը միակողմանի երթևեկությամբ ճանապարհով տրանսպորտային միջոցների հոսքին հակառակ ուղղությամբ (այդ թվում՝ հետընթաց) վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

15. Տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցը դռները բաց վիճակում վարելը, ընթացքի ժամանակ տրանսպորտային միջոցի դռները բացելը կամ կանգնած տրանսպորտային միջոցի դռները բացելը, եթե դա խոչընդոտում է երթևեկության մյուս մասնակիցներին, ինչպես նաև տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցից իրեր և առարկաներ նետելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

16. Քարշակող տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցների քարշակման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

17. Ճանապարհի բաժանարար գոտին չնախատեսված վայրերում տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հատելը ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու եղանակով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

18. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, եթե դա կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու կամ կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը շրջանցելու հետ, և եթե առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու անհնար է շրջանցել կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

19. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ձայնային ազդանշանի կիրառման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

20. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ուսումնական վարման կանոնների խախտումը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

21. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, եթե կանգառ կատարելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

22. Տրանսպորտային միջոցների կայանումը, եթե դրա հետևանքով այլ տրանսպորտային միջոցների վարորդները ստիպված են եղել կանգ առնել կամ փոխել երթևեկության ուղղությունը, և եթե կայանելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

23. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, եթե կանգառ կատարելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ, և եթե դրա պատճառով տրանսպորտային միջոցը տարհանվել է պահպանվող հատուկ տարածք՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով:

24. Ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի կետերի տարածքից դուրս կանգառ կատարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

25. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից (բացառությամբ ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների) ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կանգառ կատարելը կամ կայանելը կամ երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ կայանումը (բացառությամբ օրենսդրությամբ

թույլատրված դեպքերի), ինչպես նաև ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում կայանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

26. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը, եթե դրա անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

27. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից մայթերին կայանելը կամ մայթերով երթևեկելը, բացառությամբ ճանապարհային նշաններով թույլատրված դեպքերի, ինչպես նաև ստորգետնյա կամ վերգետնյա հետիոտնային անցումներով երթևեկելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

28. Ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կամ բեռնատար ավտոմոբիլների վարորդների կողմից ճանապարհի տվյալ ուղղությամբ երեք և ավելի երթևեկելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտիով երթևեկելը, բացառությամբ օրենսդրությամբ թույլատրված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

29. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից վթարային ազդանշանի կամ «վթարային կանգառ» ճանաչման նշանի կիրառման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

30. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից բեռների փոխադրման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

31. Տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին ոստիկանության ծառայողի՝ օրենքով սահմանված կարգով տրված պահանջը վարորդների կողմից դիտավորյալ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

32. Սույն հոդվածի երեսունմեկերորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեցող անձանց նկատմամբ՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում մեկ տարի ժամանակով, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ այդ իրավունքից զրկված անձանց նկատմամբ՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

33. Սույն օրենսգրքում ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց ասելով պետք է հասկանալ այն տրանսպորտային միջոցները, որոնք սահմանված կարգով տվյալ պահին իրականացնում են ուղևորների կանոնավոր փոխադրում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 123.2-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 123.7-րդ հոդվածով.

«**Հոդված 123.7. Հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը ներմուծման ժամկետի խախտմամբ վարելը**

1. Հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը ներմուծման ժամկետի խախտմամբ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 124.1-124.4-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 124.1. Տրանսպորտային միջոցների վարորդների մասնակցությունը ճանապարհային երթևեկության խոչընդոտներ ստեղծող խմբակային տեղաշարժին**

1. Տրանսպորտային միջոցների վարորդների մասնակցությունը այնպիսի խմբակային տեղաշարժի, որը խոչընդոտում է ճանապարհային երթևեկությանը կամ ստեղծում է երթևեկության անվտանգության սպառնալիք՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

Հոդված 124.2. Տրանսպորտային միջոցի վրա գովազդի տեղադրման կարգը խախտելը

1. Տրանսպորտային միջոցի վրա գովազդի տեղադրման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

Հոդված 124.3. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, եթե դա կատարվել է լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին ենթարկված տրանսպորտային միջոցներից առաջ անցելով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հոդված 124.4. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից սահմանված արագությունը գերազանցելը

1. Երթևեկության սահմանված արագությունը 11-20 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Երթևեկության սահմանված արագությունը 21-40 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

3. Երթևեկության սահմանված արագությունը 41-60 կմ/ժ-ով գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

4. Երթևեկության սահմանված արագությունը 61 կմ/ժ-ով և ավելի գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 124.5-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենսգրքի 124.6-րդ և 125-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 124.6. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն կամ ճանապարհատրանսպորտային պատահար, պատահարի մասնակից վարորդի կողմից պարտականությունները չկատարելը**

1. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է ճանապարհատրանսպորտային պատահար, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

3. Ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պարտականությունները չկատարելը, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

4. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված իրավախախտումներով վարչական վարույթ իրականացվում է պատահարի մասնակցի՝ պատահարի վայրում ներկայացրած գրավոր պահանջով կամ նախաքննության կամ հետաքննության մարմնի որոշման հիման վրա: ***Վարչական վարույթ իրականացվում է նաև պատահարի մասնակից տրանսպորտային միջոցի վերաբերյալ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմանագրով ապահովագրող կողմ հանդիսացող ապահովագրական ընկերության ներկայացուցչի՝ պատահարի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրած գրավոր պահանջով, եթե նախքան ապահովագրական ընկերության ներկայացուցչի պատահարի վայր ժամանելը ոստիկանությունը պատահարի մասնակից տրանսպորտային միջոցները հանել է պատահարի վայրից:***

5. Պատահարի մասնակիցների կողմից սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված պահանջի բացակայությունը փաստվում է գրավոր համաձայնությամբ:

6. Սույն հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով նախատեսված գրավոր պահանջի և գրավոր համաձայնության ձևաթղթերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

Հոդված 125. Երկաթուղային գծանցներում տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները վարորդների կողմից խախտելը

1. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից երկաթուղային գծերը երկաթուղային գծանցներով չհատելը, երկաթուղային գծանցներով անցնելիս ճանապարհը գնացքին (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ) չզիջելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Երկաթուղային գծանցին մոտենալիս գծանցի հերթապահի ցուցումներով, լուսացույցի, նշանների, գծանշումների պահանջներով, ուղեփակոցի դիրքով չղեկավարվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

3. Փակ կամ փակվող ուղեփակոցի դեպքում (անկախ լուսացույցի ազդանշանից), լուսացույցի արգելող ազդանշանի (անկախ ուղեփակոցի առկայությունից և դիրքից), տեսանելիության սահմաններում գծանցին գնացք (լոկոմոտիվ, երկաթուղասայլակ) մոտենալու, գծանցի հերթապահի արգելող ազդանշանի դեպքերում վարորդի կողմից գծանց մուտք գործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

4. Գծանցի վրա հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդի կողմից ուղևորներին անհապաղ չիջեցնելը, գծանցն ազատելու համար միջոցներ չձեռնարկելը, տրանսպորտային միջոցի մոտ չմնալը, ընդհանուր տագնապի ազդանշան չտալը, ինչպես նաև գնացք երևալու դեպքում կանգառի (տագնապի) ազդանշան տալով ընդառաջ չվազելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

5. Հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալով՝ գծանցից առաջ կանգնած տրանսպորտային միջոցները շրջանցելը, ուղեփակոցը ինքնակամ բացելը, առանց երկաթգծի ուղեմասի պետի թույլտվության գծանցով երթևեկելը դանդաղընթաց մեքենաներով 8 կմ/ժ-ից ցածր արագությամբ և տրակտորային քարշատափաններ քարշակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

6. Ընդհանուր տագնապի ազդանշան է ծառայում իրար հետևից տրվող մեկ երկար և երեք կարճ ձայնային ազդանշանների համակցությունը, իսկ որպես կանգառի (տագնապի) ազդանշան ընդունված է ձեռքի շրջանաձև շարժումը (ցերեկը՝ վառ գույնի լաթով կամ որևէ լավ տեսանելի առարկայով, գիշերը՝ ջահով կամ լապտերով):

7. Գծանցի հերթապահի արգելող ազդանշան է հանդիսանում հերթապահի կրծքով կամ մեջքով դեպի վարորդն ուղղված դիրքը, ցուցածողը, կարմիր լապտերը կամ գլխից վեր բարձրացրած դրոշակը կամ կողմ պարզած ձեռքերը:»:

Հոդված 9. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 125.1-ին հոդվածով.

«**Հոդված 125.1. Լողամիջոցների շահագործման կանոնները խախտելը**

1. Լողամիջոցը ոչ սթափ վիճակում վարելը կամ սթափության վիճակը որոշելու համար ստուգումից խուսափելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

2. Սահմանված կարգով չգրանցված կամ տեխնիկական անսարքություններ ունեցող լողամիջոցները շահագործելը կամ առանց կողային համարների լողամիջոցը վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

3. Առանց նավավարման իրավունքի վկայականի լողամիջոց վարելը կամ լողամիջոցի վարումը նավավարման իրավունքի վկայական չունեցող անձին հանձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

4. Առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի լողամիջոցը շահագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

5. Առանց փրկարարական միջոցների լողամիջոց վարելը կամ փրկարարական միջոցների քանակից ավելի թվով ուղևորներ տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

6. Լողամիջոցներում սահմանված հրդեհային անվտանգության կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»:

Հոդված 10. Օրենսգրքի 126-րդ և 128-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 126. Տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը

1. Տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը գտնվում է միայն ալկոհոլի ազդեցության տակ, և զանցանքը չի պարունակում սույն հոդվածի երկրորդից վեցերորդ մասերի հատկանիշները՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը կատարելը, եթե վարորդի արյան մեկ լիտրի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը, կամ եթե նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինսնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը կատարելը, եթե վարորդի ոչ սթափ վիճակում գտնվելը պայմանավորված է արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակությամբ՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում մեկ տարի ժամանակով:

4. Սահմանված կարգին համապատասխան՝ սթափության վիճակը ստուգելու նպատակով զննություն անցնելուց խուսափելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինսնապատիկի չափով:

5. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում մեկ տարի ժամանակով:

6. Սույն հոդվածի երկրորդ կամ չորրորդ մասերով նախատեսված արարքը կատարելը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի երրորդ կամ հինգերորդ մասերով նախատեսված արարքը կատարելը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրհիսնապատիկի չափով:

8. Սույն հոդվածի առաջինից հինգերորդ մասերով նախատեսված արարքները կատարելը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրհիսնապատիկի չափով:

9. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքում անձը համարվում է ոչ սթափ վիճակում գտնվող, եթե ստուգմամբ պարզվում է, որ նրա մեկ լիտր արյան մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը 0.4 գրամից կամ մեկ լիտր արտաշնչած օդի մեջ 0.2 միլիգրամից ավելի է, կամ եթե անձի արյան կամ մեզի մեջ առկա է թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակություն:

10. Արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի ոչ սթափ վիճակում գտնվելու փաստի որոշումը կարող է իրականացվել տեխնիկական միջոցով կամ բժշկական փորձաքննությամբ: Անձի արյան մեջ մաքուր ալկոհոլի կամ արյան կամ մեզի մեջ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի պարունակությամբ ոչ սթափ վիճակի որոշումն իրականացվում է բժշկական փորձաքննությամբ:

Հոդված 128. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը, առանց վարորդական վկայականի կամ այլ փաստաթղթերի կամ ուժը կորցրած վարորդական վկայականով կամ այլ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ երկրի վարորդական վկայականով կամ օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում չգործող վարորդական վկայականով տրանսպորտային միջոցներ վարելը կամ տրանսպորտային միջոցների վարումն այդ իրավունքը չունեցող անձին հանձնելը

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3. Առանց վարորդական վկայականի կամ այլ փաստաթղթերի կամ ուժը կորցրած վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ երկրի վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը, ինչպես նաև օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում չգործող (ՄԱԿ-ի 1968 թվականի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի պահանջները չբավարարող) վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով:

5. Տրանսպորտային միջոցների վարումն այդ իրավունքը չունեցող անձին հանձնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

6. Սույն հոդվածում այլ փաստաթղթեր ասելով պետք է հասկանալ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթերը, մաքսային փաստաթղթերը, վարորդական վկայականում նշված

դեպքերում՝ նաև բժշկական տեղեկանքը և այլն, որոնք չեն ներառում լիազորագիրը, ուղեգիրը, բեռնաուղեգիրը:

7. Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող, եթե նա սահմանված կարգով չի ստացել տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական կամ սահմանված կարգով ստացել է վարորդական վկայական, սակայն օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից և զրկման ժամկետը լրանալուց հետո սահմանված կարգով չի վերականգնել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը, բացառությամբ ուսումնական վարման դեպքերի:

8. Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է առանց վարորդական վկայականի, եթե նա ունի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, սակայն վարելու ընթացքում իր մոտ չունի վարորդական վկայական:»:

Հոդված 11. Օրենսգրքի 129-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենսգրքի 131-132-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 131. Հետիոտների և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը**

1. Հետիոտների և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարորդների) ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշաններին չենթարկվելը, ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները խախտելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

2. Հետիոտների կողմից ճանապարհով (այդ թվում՝ մայթերով կամ հետիոտնային արահետներով, իսկ դրանց բացակայության դեպքում կողնակներով) շարժվելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

3. Հետիոտների կողմից ճանապարհի երթևեկելի մասը հատելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

4. Տրանսպորտային միջոցի ուղևորի կողմից ընթացքի ժամանակ տրանսպորտային միջոցի դռները բացելը կամ կանգնած տրանսպորտային միջոցի դռները բացելը, եթե դա խոչընդոտում է երթևեկության մյուս մասնակիցներին, ինչպես նաև ուղևորների կողմից տրանսպորտային միջոցից իրեր և առարկաներ նետելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

5. Մոպեդները, հեծանիվները կամ լծասայլերը վարելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

6. Սույն հոդվածի 1-5-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելը, որոնք ստեղծել են վթարային իրադրություն՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

7. Ճանապարհներով անասուններ քշելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Հոդված 132. Անսարքություններ ունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը թույլատրելը և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների այլ խախտումները

1. Չհաշվառված, տեխնիկական զննություն չանցած, տեխնիկական անսարքություններ ունեցող կամ առանց համապատասխան թույլտվության վերասարքավորված, մեծ եզրաչափերով, ծանրաքաշ, վտանգավոր բեռների կամ չվնասազերծված տարայի փոխադրման կանոնների խախտումներով, անընթեռնելի, ստանդարտին չհամապատասխանող, ինքնաշեն կամ սահմանված

տեղում չփակցված հաշվառման համարանիշներով, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրանսպորտային միջոցի հետնապատին հաշվառման համարանիշի կրկնօրինակում չունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձանց կողմից թույլատրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Առանց հաշվառման համարանիշի, կեղծված կամ փոխարինված հաշվառման համարանիշով կամ ժամանակավոր համարանիշի օգտագործման ժամկետը լրանալուց հետո տրանսպորտային միջոցի շահագործումը կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձանց կողմից թույլատրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3. Կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձանց կողմից ոչ սթափ վիճակում գտնվող վարորդներին տրանսպորտային միջոցներ վարել թույլ տալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

4. Կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձանց տրանսպորտային միջոցներ վարել թույլ տալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

5. Սույն հոդվածի առաջինից չորրորդ մասերով նախատեսված արարքները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքների համար սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 13. Օրենսգրքի 133-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենսգրքի 135.1-ին հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 135.1. Հասարակական՝ օդային, ջրային, էլեկտրական և երկաթուղային տրանսպորտում ծխելը».

2) 1-ին մասի դիսպոզիցիայից հանել «ավտոմոբիլային,» բառը:

Հոդված 15. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 135.2-րդ հոդվածով.

«**Հոդված 135.2. Տրանսպորտային միջոցներում ծխելը**

1. Տրանսպորտային միջոցի, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների, վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում ծխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:»:

Հոդված 16. Օրենսգրքի 140-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 140. Ճանապարհները, երկաթուղային գծանցները և ճանապարհի այլ ինժեներական կառույցները վնասելը**

1. Ճանապարհները, երկաթուղային գծանցները, ճանապարհի այլ ինժեներական կառույցները կամ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները վնասելը, փակելը,

հանելը կամ տեղադրելը, ինչպես նաև ճանապարհային երթևեկության համար խոչընդոտներ ստեղծելը (այդ թվում՝ ճանապարհի ծածկույթը աղտոտելու, առանց համապատասխան թույլտվության ճանապարհի վրա բացօթյա առևտուր իրականացնելու, շինարարական նյութեր կամ այլ իրեր ու առարկաներ ճանապարհին թողնելու միջոցով)՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

2. Առանց համապատասխան թույլտվության կամ իրավասու մարմինների հետ համաձայնեցման՝ ճանապարհի վրա շինարարական աշխատանքներ կատարելը կամ գովազդ տեղադրելը, ինչպես նաև ճանապարհների հետ հատումներ բացելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքները, եթե դրանք խոչընդոտում են վարորդների կողմից լուսացույցները, ճանապարհային նշանները կամ երթևեկության կարգավորման այլ տեխնիկական միջոցները տեսնելուն՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

4. Ինքնակամ ճանապարհային նշաններ (այդ թվում՝ ինքնաշեն) տեղադրելը կամ ապամոնտաժելը, ինչպես նաև ինքնակամ գծանշումներ կատարելը կամ դրանք փոփոխելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

5. Առանց համապատասխան թույլտվության կանգնակների, արգելապատնեշների կամ այլ պարագաների միջոցով երթևեկելի մասը սահմանափակելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ սահմանափակող իրերի և առարկաների բռնագրավմամբ:»:

Հոդված 17. Օրենսգրքի 153-րդ հոդվածի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բնակելի տարածություն կամ ժամանակավոր կացարան ինքնակամ զբաղեցնելը՝»:

Հոդված 18. Օրենսգրքի 160-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «երեսուն տոկոսից մինչև հիսուն տոկոսի» բառերը փոխարինել «երեսնապատիկի» բառով.

2) 2-րդ մասի սանկցիայում «հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը» բառերը փոխարինել «հիսնապատիկի չափով» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 173-րդ հոդվածի սանկցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ հրազենի և ռազմամթերքի բռնագրավմամբ կամ առանց դրա:»:

Հոդված 20. Օրենսգրքի 175-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 175. Հասարակական վայրերում ոգելից խմիչքներ օգտագործելը կամ ոչ սթափ վիճակում հայտնվելը**

1. Ոգելից խմիչքներ օգտագործելը փողոցներում, մարզադաշտերում, պուրակներում, զբոսայգիներում, հասարակական տրանսպորտի բոլոր տեսակներում կամ հասարակական այլ վայրերում, բացառությամբ ոգելից խմիչքների իրացման թույլտվություն ունեցող հանրային սննդի օբյեկտների, կամ ոչ սթափ վիճակում հասարակական վայրերում հայտնվելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունքով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»:

Հոդված 21. Օրենսգրքի 177-րդ հոդվածի սանկցիայում «հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը» բառերը փոխարինել «քսանապատիկի չափով» բառերով:

Հոդված 22. Օրենսգրքի 178-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի դիսպոզիցիայից հանել «երկրորդ և» բառերը, իսկ սանկցիայում «տասը տոկոսից մինչև երեսուն տոկոսի» բառերը փոխարինել «երեսնապատիկի չափով» բառերով.

2) ուժը կորցրած ճանաչել հոդվածի 2-րդ մասը.

3) 3-րդ մասի սանկցիայում «հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը» բառերը փոխարինել «քսանապատիկի չափով» բառերով:

Հոդված 23. Օրենսգրքի 179.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը» բառերը փոխարինել «քսանապատիկի չափով» բառերով.

2) 2-րդ մասի սանկցիայում «լրիվ չափից մինչև կրկնապատիկը» բառերը փոխարինել «քառասնապատիկի չափով» բառերով:

Հոդված 24. Օրենսգրքի 180-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 180. Լռության խախտումը**

1. Գիշերային ժամանակ (ժամը 23.00-ից մինչև 7.00) լռության խախտումը, այսինքն՝ բարձրաձայն երգելը, կամ երաժշտական գործիքների վրա նվագելը, կամ ձայնային ազդանշաններ տալը, կամ բարձր միացրած հեռուստացույցից, ռադիոընդունիչից, մագնիտոֆոնից կամ այլ սարքերից օգտվելը բնակելի շենքերի բնակարաններում, կամ մուտքերում, կամ բնակելի տարածություններում, կամ բակերում, կամ փողոցներում, կամ այլ հասարակական վայրերում, կամ դրանցից դուրս աղմուկով ուղեկցվող աշխատանքներ կատարելը, որոնք կապված չեն անհետաձգելի անհրաժեշտության հետ, ինչպես նաև այլ գործողությունները, որոնք խախտում են գիշերային անդորրը՝

առաջացնում են նախազգուշացում:

2. Գիշերային ժամանակ հրագործական արտադրատեսակներ օգտագործելը (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի)՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 25. Օրենսգրքի 181-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 181. Հատուկ ծառայությունների ակնհայտ կեղծ կանչը**

Պետական հակահրդեհային ծառայության, ոստիկանության, շտապ բուժօգնության և մյուս հատուկ ծառայությունների ակնհայտ կեղծ կանչը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:»:

Հոդված 26. Օրենսգրքի 182-րդ հոդվածի վերնագրում «Զինծառայողների» բառը փոխարինել «Ոստիկանության զորքերի զինծառայողի» բառերով, իսկ դիսպոզիցիան «զինծառայողի» բառից առաջ լրացնել «ոստիկանության զորքերի» բառերով:

Հոդված 27. Օրենսգրքի 183-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 183. Ինքնիրավչություն**

Ինքնիրավչությունը՝ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելը,

որը չի պատճառել էական վնաս անձանց իրավունքներին կամ օրինական շահերին կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական շահերին՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:»:

Հոդված 28. Օրենսգրքի 190-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը» բառերը փոխարինել «երեսնապատիկի չափով» բառերով.

2) 2-րդ մասի սանկցիայում «վաթսունհինգ տոկոսից մինչև հարյուր հիսուն տոկոսի» բառերը փոխարինել «հիսնապատիկի» բառով:

Հոդված 29. Օրենսգրքի 191-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի սանկցիայում «տասը տոկոսից մինչև քսան տոկոսի» բառերը փոխարինել «քսանապատիկի» բառով.

2) 2-րդ մասի սանկցիայում «տասնհինգ տոկոսից մինչև երեսուն տոկոսի» բառերը փոխարինել «քառասնապատիկի» բառով.

3) 3-րդ մասի սանկցիայում «երեսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը» բառերը փոխարինել «երեսնապատիկի չափով» բառերով.

4) 4-րդ մասի սանկցիայում «հիսուն տոկոսից մինչև հարյուր հիսուն տոկոսի» բառերը փոխարինել «հիսնապատիկի» բառով:

Հոդված 30. Օրենսգրքի 192-րդ հոդվածի սանկցիայում «հինգ տոկոսի» բառերը փոխարինել «քսանապատիկի» բառով:

Հոդված 31. Օրենսգրքի 193-րդ հոդվածի սանկցիայում «հինգ տոկոսից մինչև քսան տոկոսի» բառերը փոխարինել «երեսնապատիկի» բառով:

Հոդված 32. Օրենսգրքի 200-րդ հոդվածի սանկցիայում «հինգ տոկոսից մինչև տասը տոկոսի» բառերը փոխարինել «երեսնապատիկի» բառով:

Հոդված 33. Օրենսգրքի 219-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «110-110.2 հոդվածներով», «134 և», «153-156 հոդվածներով», «177, 178 հոդվածներով (բացի անչափահասների ծնողների կամ նրանց փոխարինող անձանց վերաբերյալ գործերից)» բառերը և «160», «173», «179.1, 181, 183», «190-193, 195-197» թվերը:

2) 2-րդ մասից հանել «173, 175 հոդվածներով, 177, 178 հոդվածներով (բացի անչափահասների ծնողների կամ նրանց փոխարինող անձանց վերաբերյալ գործերից) և 183» բառերը և «134», «153-156», «190-193» թվերը:

Հոդված 34. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածից հանել «180-րդ» թիվը:

Հոդված 35. Օրենսգրքի 220-րդ հոդվածից հանել «134 (բացի վարորդների կողմից տրանսպորտային միջոցներն օգտագործելու վերաբերյալ գործերից),», «177, 178 հոդվածներով (բացի անչափահասների ծնողների կամ նրանց փոխարինող անձանց վերաբերյալ գործերից),» բառերը և «173», «190-193» թվերը:

Հոդված 36. Օրենսգրքի 221-րդ հոդվածից հանել երկրորդ և երրորդ նախադասությունները:

Հոդված 37. Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝

1) վերնագրի և 1-ին մասի «առաջին ատյանի» բառերը փոխարինել «վարչական» բառով.

2) 1-ին կետից հանել «53» թիվը և «175 հոդվածի երկրորդ մասով,» բառերը, իսկ «189.8-189.10» թվերը փոխարինել «189.9-189.10» թվերով:

Հոդված 38. Օրենսգրքի 224-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 224. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 44.1, 44.2, 53, 110.1, 110.2, 123-123.4, 123.5-րդ հոդվածով (բացառությամբ՝ 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված

իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.1, 129.2, 131, 132, 134, 135.1, 135.2, 139, 140, 153, 160, 173, 173.2, 175, 177, 178, 179.1, 180, 181, 183, 186 (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում), 189.8, 190-193, 195.1-196, 199, 200 և 201 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն՝

1) սույն օրենսգրքի 44.1, 44.2, 53, 110.1, 110.2, 125.1, 134, 135.1, 139, 153, 160, 173, 173.2, 175, 177, 178, 179.1, 180, 181, 183, 189.8, 190-193, 199 և 200 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների պետերը և նրանց տեղակալները: ***Սույն կետով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների պետերի կամ նրանց տեղակալների անունից կարող են քննել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով լիազորված պաշտոնատար անձինք.***

2) սույն օրենսգրքի 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6, 123.7, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.6, 125, 126, 128, 129.1, 129.2, 131, 132, 135.2, 140 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ Ճանապարհային ոստիկանության բաժնի (բաժանմունքի) պետը, բաժնի (բաժանմունքի) պետի տեղակալը, ճանապարհապարեկային ծառայության ստորաբաժանումների հրամանատարները և նրանց տեղակալները, ***Ճանապարհային ոստիկանության վարչական մասի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով լիազորված պաշտոնատար անձինք***.

3) սույն օրենսգրքի 123, 123.1, 123.3, 123.4 հոդվածներով, 123.5 (բացառությամբ 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6, 123.7, 124 (բացառությամբ 31-րդ և 32-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 124.1, 124.2, 124.3, 124.4, 125, 128, 129.1, 129.2, 131, 135.2 և 140 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ ***Ճանապարհային ոստիկանության տարածքային ստորաբաժանումների*** ավագ տեսուչները, տեսուչները.

4) սույն օրենսգրքի 195.1-196 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ անձնագրային և վիզաների վարչության պետը, պետի տեղակալը, անձնագրային և վիզաների վարչության տարածքային անձնագրային ծառայությունների պետերը (ղեկավարները).

5) սույն օրենսգրքի 201 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ անձնագրային և վիզաների վարչության պետը, պետի տեղակալը, սահմանային անցակետում տեղաբաշխված ստորաբաժանման պետը, տեղակալը և ավագ տեսուչը, անձնագրային և վիզաների վարչության տարածքային անձնագրային ծառայությունների պետերը (ղեկավարները):

6) սույն օրենսգրքի 186 հոդվածով (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում) նախատեսված վարչական իրավախախտումների համար՝ հասարակական կարգի ապահովման վարչության պետը, նրա տեղակալը:»:

Հոդված 39. Օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասում «պետական ավտոմոբիլային տեսչությանը» բառերը փոխարինել «Ճանապարհային ոստիկանությանը» բառերով:

Հոդված 40. Օրենսգրքի 244.13-րդ հոդվածի 1-ին մասում «օրենսգրքի» բառից հետո լրացնել «123.5-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով,» բառերը:

Հոդված 41. Օրենսգրքի 254-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «առաջին ատյանի» բառերը փոխարինել «վարչական» բառով.

2) 1-ին մասի 3-րդ կետում «53 հոդվածով, 175 հոդվածի երկրորդ մասով և 180.1, 189.8 հոդվածներով» բառերը փոխարինել «180.1 և 182 հոդվածներով» բառերով.

3) 1-ին մասի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 42. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 4-րդ մասը «123.5» թվից հետո լրացնել «123.6, 123.7» թվերով:

Հոդված 43. Օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ և 304-րդ հոդվածի 3-րդ մասերում «ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերով:

Հոդված 44. Օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում «ներքին գործերի մարմնի (միլիցիայի)» բառերը փոխարինել «ոստիկանության» բառով:

Հոդված 45. Օրենսգրքի 283-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված հոդվածներով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով ընդունված որոշումները համարվում են հանձնված (ստացված) նաև, եթե անձը որին ուղարկվել է որոշումը, չի եղել տրանսպորտային միջոցի գրանցման (հաշվառման) կամ վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ժամանակ իր կողմից նշված հաշվառման (գտնվելու), ժամանակավոր հաշվառման կամ բնակության վայրում կամ ճիշտ չի նշել հասցեն կամ հրաժարվել է ստանալ ուղարկված (հանձնվող) որոշումը:»:

Հոդված 46. Օրենսգրքի 294-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 47. Օրենսգրքի 302-րդ հոդվածի 1-ին մասը «123.5» թվից հետո լրացնել «123.6, 123.7» թվերով:

Հոդված 48. Օրենսգրքի 305-րդ հոդվածի՝

1) 2-րդ և 3-րդ մասերում «123-129.2-րդ, 132-134.1-րդ և 140-րդ» բառերը փոխարինել «224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված» բառերով.

2) 4-րդ մասում «123-129.2, 131-133 և 140» բառերը փոխարինել «224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված» բառերով:

Հոդված 49. Օրենսգրքի 307-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված հոդվածներով նախատեսված իրավախախտումներ կատարած անձը չի վիճարկում իր կողմից կատարված իրավախախտման փաստը, ապա նա իրավունք ունի տուգանքը վճարելու տեղում, այդ թվում՝ անկանխիկ եղանակով: Տուգանքի վճարման մասին խախտողին տրվում է սահմանված նմուշի անդորրագիր, որը ֆինանսական խիստ հաշվառման փաստաթուղթ է:»:

Հոդված 50. Օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 51. Օրենսգրքի 315-րդ հոդվածի 3-րդ մասում «ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» բառերով:

Հոդված 52. Օրենսգրքի տեքստում «ներքին գործերի մարմին», «ներքին գործերի նախարարություն» և «միլիցիա» բառերն ու դրանց հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «ոստիկանություն» բառով և դրա հոլովաձևերով:

Հոդված 53. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ***2012 թվականի հունիսի 2-ից: Սույն օրենքի 1-ին, 2-րդ, 6-րդ և 45-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:***

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից 2011թ. նոյեմբերի 29-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	*Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը*	*Եզրակացություն*
ՀՀ ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյան	Հոդված 3 (նախկին խմբագրությամբ հոդված 1)	Օրենքի նախագծի 123.4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Տեխնիկական զննության կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում չփակցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: 3. Հաշվառման կտրոնը տրանսպորտային միջոցի՝ օրենսդրությամբ սահմանված տեղում չփակցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»:	Առաջարկությունն ըստ էության ընդունվել է: 123.4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրվել են նոր խմբագրությամբ:
	Հոդված 3 (նախկին խմբագրությամբ հոդված 1)	Օրենքի նախագծի 124-րդ հոդվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «15. Տրանսպորտային միջոցի վարորդի կողմից տրանսպորտային միջոցից իրեր և առարկաներ նետելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով: Այն դեպքում, երբ իրավախախտումը նկարահանվել և ներկայացվել է համապատասխան մարմին քաղաքացու կողմից, որտեղ հստակ երևում է մեքենայի պետհամարանիշը և վարորդի կողմից կատարվող գործողությունը, ապա տուգանքի կեսը վճարվում է քաղաքացուն՝ որպես խրախուսանք:»:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ 124-րդ հոդվածի 15-րդ մասի դիսպոզիցիան պարունակում է նաև այլ զանցակազմեր, և բացի այդ, մեր կարծիքով, անընդունելի է քաղաքացիներին իրավախախտումներ հայտնաբերելու լիազորություններով օժտելը:
	Հոդված 3 (նախկին խմբագրությամբ հոդված 1)	Օրենքի նախագծի 124-րդ հոդվածի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «23. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, եթե կանգառ կատարելու անհրաժեշտությունը կապված չէ տրանսպորտային միջոցի տեխնիկական կամ վարորդի կամ ուղևորի առողջական վիճակի հետ, և եթե դրա պատճառով տրանսպորտային միջոցը տարհանվել է պահպանվող հատուկ տարածք՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»:	Առաջարկությունն ընդունվել է մասամբ, սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով տուգանքի փոխարեն նախատեսվել է ութսունապատիկի չափով տուգանք:

ՀՀ ԱԺ պատգամավոր Արա Նռանյան	Հոդված 3 (նախկին խմբագրությամբ հոդված 1)	Առաջարկվում է հոդված 123-ում ապակիների, արտաքին թաղանթապատում ունեցող ապակիների լուսաթափանցելիության թույլատրելի չափերը, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասի պահանջներից բացառություն սահմանել միայն ՀՀ նախագահի, ՀՀ ԱԺ նախագահի, ՀՀ վարչապետի մեքենաների, ինչպես նաև նրանց ուղեկցող հատուկ ծառայության մեքենաների համար:	Առաջարկությունն ընդունելի է: Օրենքի նախագծի ընդունումից հետո կվերանայվեն նաև նշված բացառությունները սահմանող իրավական ակտերը:
	Հոդված 10 (նախկին խմբագրությամբ հոդված 8)	Առաջարկվում է հոդված 126-ում նախատեսված դրույթները խստացնել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների և (կամ) թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլների վարորդների համար՝ առաջին իսկ դեպքից առնվազն 1 տարով վարորդական իրավունքից զրկելով:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ լինում են դեպքեր, երբ, չնայած այն հանգամանքին, որ տրանսպորտային միջոցը նախատեսված է ուղևորների կանոնավոր փոխադրումներ կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ իրականացնելու համար, հնարավոր չէ պարզել այդ պահին անձը իրականացնում է այդ փոխադրումը, թե՝ ոչ:
	Հոդված 10 (նախկին խմբագրությամբ հոդված 8)	Առաջարկվում է հոդված 126-ում թմրանյութ օգտագործած վիճակում մեքենա վարելու համար վարչական պատասխանատվությունը սահմանել որպես առանձին կետ և տվյալ իրավախախտման համար զրկել վարորդական իրավունքից նվազագույնը մեկ տարով:	Առաջարկությունն ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Հոդված 1 Հոդված 2 Հոդված 45	Առաջարկվում է Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածներով. «**Հոդված 1.** Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության, որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնների, մաքսային կանոնների խախտման և մաքսանենգության համար այդ անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով: Որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնների, մաքսային կանոնների խախտման և մաքսանենգության համար նշված անձանց նկատմամբ տուգանք չի կարող կիրառվել, իսկ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության խախտման համար նշված անձանց նկատմամբ տուգանք չի կարող կիրառվել, եթե	Առաջարկությունն ընդունվել է: Առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են Երևան քաղաքում տեղադրված տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի գործարկմամբ և նպատակ ունեն՝ 1. ապահովել հավասար պատասխանատվության միջոցի կիրառում բոլոր սուբյեկտների նկատմամբ, անկախ նրանց զինծառայող լինելու հանգամանքից. 2. տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն սահմանել տրանսպորտային միջոցների սեփականատերերի, այլ ոչ թե այն անձանց համար, ում անվամբ

		իրավախախտումը կատարվել է զինված ուժերին պատկանող տրանսպորտային միջոցներով:»: **Հոդված 2.** Օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում «այն անձը, ում անվամբ հաշվառված է տրանսպորտային միջոցը» բառերը փոխարինել «տրանսպորտային միջոցի սեփականատերը» բառերով: **Հոդված 45.** Օրենսգրքի 283-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով. «6. Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված հոդվածներով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով ընդունված որոշումները համարվում են հանձնված (ստացված) նաև, եթե անձը որին ուղարկվել է որոշումը, չի եղել տրանսպորտային միջոցի գրանցման (հաշվառման) կամ վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ժամանակ իր կողմից նշված հաշվառման (գտնվելու), ժամանակավոր հաշվառման կամ բնակության վայրում կամ ճիշտ չի նշել հասցեն կամ հրաժարվել է ստանալ ուղարկված (հանձնվող) որոշումը:»:	հաշվառված են տրանսպորտային միջոցները, քանի որ բազմաթիվ են դեպքերը, երբ տրանսպորտային միջոցը պատշաճ կարգով օտարվել է, սակայն մնացել է հաշվառված հին սեփականատիրոջ անվամբ. 3. առավել հստակ կարգավորել վարչական իրավախախտումների գործերով կայացված որոշումների հանձնման մեխանիզմները, քանի որ ներկայումս անձը տրանսպորտային միջոցի գրանցման, վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման արձանագրություն կազմելու ժամանակ ոստիկանությանը հայտնում է իր բնակության վայրի հասցեն, սակայն հետագայում վարչական գործերով կայացված որոշումները նշված հասցեով առաքելու դեպքում պարզվում է, որ նա այդ վայրում արդեն չի բնակվում, և չնայած այն հանգամանքին, որ նա պարտավոր էր այդ դեպքում իր տրանսպորտային միջոցը ներկայացնել վերահաշվառման, դա չի արել, կամ դիտավորյալ հայտնել է սխալ հասցե:
	Հոդված 6 (նախկին խմբագրությամբ հոդված 4)	Առաջարկվում է Նախագծի 6-րդ հոդվածով խմբագրվող գործող օրենսգրքի 124.4-րդ հոդվածը խմբագրել՝ նախատեսելով սահմանված արագության գերազանցման սահմանային չափերի ավելի շատ տարբերակներ և ավելի խիստ պատասխանատվություն բարձր արագությունների համար:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:
	Հոդված 8 (նախկին խմբագրությամբ հոդված 6)	Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածով խմբագրվող գործող օրենսգրքի *124.6-րդ հոդվածի 4-րդ մասում* նախատեսել վարչական վարույթ իրականացնելու հնարավորություն նաև պատահարի մասնակից տրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրող կողմ հանդիսացող ապահովագրական ընկերության ներկայացուցչի՝ պատահարի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրած գրավոր պահանջի հիման վրա, եթե նախքան ապահովագրական ընկերության ներկայացուցչի պատահարի վայր ժամանելը ոստիկանությունը պատահարի մասնակից տրանսպորտային միջոցները հանել է պատահարի վայրից:	Առաջարկությունն ընդունվել է: 4-րդ մասը լրացվել է նոր նախադասությամբ:

	Հոդված 12 (նախկին խմբագրությամբ հոդված 10)	Առաջարկվում է Նախագծի 12-րդ հոդվածով խմբագրվող գործող օրենսգրքի *132-րդ հոդվածի 3-րդ մասով* նախատեսված՝ կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձանց կողմից ոչ սթափ վիճակում գտնվող վարորդներին տրանսպորտային միջոցներ վարել թույլ տալու համար նախատեսել ավելի խիստ պատասխանատվություն՝ ԱԺ պատգամավոր Կորյուն Նահապետյանի առաջարկության հիման վրա:	Առաջարկությունն ընդունվել է, Նախագծի 12-րդ հոդվածով խմբագրվող գործող օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասը տրոհվել է (3-րդ և 4-րդ մասեր) և կազմակերպությունների ղեկավարների կամ տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և շահագործման համար պատասխանատու անձանց կողմից ոչ սթափ վիճակում գտնվող վարորդներին տրանսպորտային միջոցներ վարել թույլ տալու համար 20.000 դրամ տուգանքի փոխարեն նախատեսվել է 50.000 դրամ տուգանք:
	Հոդված 53 (նախկին խմբագրությամբ՝ 55 հոդված)	Հաշվի առնելով, որ Նախագծով գործող օրենսգիրքը լրացվում է նոր իրավախախտումներ նախատեսող հոդվածներով, ինչպես նաև կատարվում են մի շարք իրավախախտումների համար սահմանված սանկցիաների փոփոխություններ, ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյանի առաջարկության հիման վրա անհրաժեշտ է ուժի մեջ մտնելու համար սահմանել ավելի ուշ ժամկետ, որպեսզի հնարավոր լինի ապահովել օրենքի վերաբերյալ պատշաճ իրազեկում:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 24 (նախկին խմբագրությամբ՝ 22 հոդված)	Առաջարկվում է նախագծով փոփոխվող 180-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հրա-գործական արտադրատեսակների օգտագործման համար սահմանել ավելի խիստ պատասխանատվություն:	Ընդունվել է. հրագործական արտադրատեսակների օգտագործումը նախատեսվել է հոդվածի 2-րդ մասով՝ սահմանելով 100.000 դրամ տուգանք:
	Հոդված 25	Առաջարկվում է հանել նախագծի 25-րդ հոդվածը, որով օրենսգիրքը լրացվում է նոր 182.2 հոդվածով (Ոստիկանության ծառայողին վիրավորելը), քանի որ նախատեսվում է նշված հարցը քննարկել ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանակներում:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 31-35	Առաջարկվում է հանել նախագծի 31-35-րդ հոդվածները, քանի որ 29.11.11թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը («Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի փաթեթից), որով կանոնագարգվել են նշված հարաբերությունները:	Առաջարկությունն ընդունվել է:

	Հոդված 37, կետ 2 Հոդված 38 (նախկին խմբագրությամբ՝ 41 և 42 հոդվածներ)	Օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու լիազորությունը թողնել առաջին ատյանների դատարաններին:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածները խմբագրվել են:
	Հոդված 38 (նախկին խմբագրությամբ՝ 42 հոդված)	Առաջարկվում է նախագծով փոփոխվող 224-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու լիազորություն տալ նաև ՀՀ ոստիկանության պետի կողմից լիազորված պաշտոնատար անձանց: Առաջարկվում է վերանայել նախագծով փոփոխվող 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը:	Առաջարկությունն ընդունվել է: Հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը լրացվել է նոր նախադասությամբ, իսկ 2-րդ և 3-րդ կետերը խմբագրվել են:
	Հոդված 41	Հաշվի առնելով մի շարք վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայության՝ նախագծով կատարվող փոփոխությունները՝ առաջարկվում է օրենսգրքի 254-րդ հոդվածում ևս կատարել համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է. նախագիծը լրացվել է նոր հոդվածով:
	Հոդված 49 (նախկին խմբագրությամբ՝ 51 հոդված)	Առաջարկվում է օրենսգրքի 307-րդ հոդվածում նախատեսել, որ եթե օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված հոդվածներով նախատեսված իրավախախտումներ կատարած անձը չի վիճարկում իր կողմից կատարված իրավախախտման փաստը, ապա նա իրավունք ունի տուգանքը վճարելու տեղում՝ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:	Առաջարկությունն ընդունվել է. հոդվածը խմբագրվել է: